# ՇԵՆԳԱՎԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՕՋԱԽՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԱՄԱԼԻՐՆԵՐԸ

ԱՐՏԱԿ ԳՆՈՒՆԻ

*Հին հասարակությունների կյանքում օջախները և օջախային համալիրները մեծ դեր էին կատարում, քանզի դրանց շուրջն էր սովորաբար կենտրոնանում մարդկանց տվյալ խմբի տնտեսական, հասարակական և ծիսական գործունեությունը: Որոշակիորեն կարելի է ասել, որ օջախը մարդկանց խմբի միկրոաշխարհի կենտրոնի խորհրդանիշն էր[1]: Ներկայացվող հոդվածը նվիրված է մ.թ.ա. III հազ. օջախներին և օջախային համալիրներին: Նշված ժամանակաշրջանում Հայաստանը ներառված էր շենգավթյան մշակույթի տիրույթներում, որոնք ընդգրկում էին Հյուսիսային Կովկասից Պաղեստին և Կասպից ծովից՝ Տավրոսյան լեռներ տարածքը:*

*Վաղ բրոնզի դարում օջախներ հայտնաբերված են ինչպես կացարաններում, այնպես էլ ծիսական կառույցներում և դամբարաններում:*

Օջախները պաշտամունքային համալիրներում: *Ծիսական կառույցներում օջախ հաստատագրված է Ջրահովտում, ամենայն հավանականությամբ՝ Մոխրաբլուրի պաշտամունքային համալիրում, Կվացխելեբիում[2]: Հավանաբար, սրբավայր էին Պուլուրի (Սաքյոլ) X հորիզոնի 79, 80 և 83 կացարանները, որոնց անկյուններում տեղադրված էին մարդակերպ արձանիկներ, իսկ կենտրոնում օջախ[3]: Կենտրոնական օջախ ուներ Շենգավթի համալիրներից մեկը, որի մոնումենտալ բնույթը ընդգծվում է համալիրն օղակող 2մ բարձրությամբ հում աղյուսե պարսպով[1]: Օջախներով և զոհարաններով ծիսական հարթակ հայտնաբերված է նաև Օղնիում[5]:*

---

[1] П. В. В о л к о в. Экспериментальные исследования отопительных костров древности.— "Методология и методика археологических исследований". Новосибирск, 1994, с. 104-105.

[2] А. И. Д ж а в а х и ш в и л и, Л. И. Г л о н т и. Урбниси I. Тбилиси, 1962, с. 62; *Է. Խ ա ն զ ա դ յ ա ն. Ջրահովտի պեղումները.— ՀՀ 1989-1990 թթ. դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված գիտաժողով (այսուհետև՝ թեզիսներ). Երևան, 1991, էջ 12:* А. Е. С и м о н я н, А. В. Г н у н и. Культовые сооружения Армянского нагорья и их эволюционное развитие 9 тыс. до н. э.—9 в. до н.э.— "Эрмитажные чтения памяти Б. Б. Пиотровского", СПб., 1998, с. 83.

[3] A. G. S a g o n a. The Caucasus Region in the Early Bronze Age. Oxford. 1982, pt. I, p. 70; Е. В. А н т о н о в а, С. А. Е с а я н. Антропоморфная скульптура Армянского нагорья V-III тыс. до н. э.: местная специфика и межрегиональные связи.— В кн.: "Древний Восток. Этнокультурные связи". М., 1988, с. 233.

[4] Е. Б а й б у р т я н. Шенгавитское поселение.— "Коммунист", 21. 10. 1937.

[5] Т. Н. Ч у б и н и ш в и л и. К древней истории Южного Кавказа. Тбилиси, 1971, с. 79; Б. А. К у ф т и н. Археологические раскопки 1947 г. в Цалкинском районе. Тбилиси, 1948, с. 42-43; Л. Ж о р ж и к а ш в и л и, Э. Го-

Օջախներ դամբարանային կառույցներում: *Օջախի հենակներ հայտնաբերվել են Էլառի, Մուխանի, Նախիդըրաբիս Զալիի դամբարաններում*[6]*: Օջախների տեղադրումը դամբարաններում կարող էր նախատեսված լինել ննջեցյալի կողքին դրված կերակրի պատրաստման, ինչպես նաև դամբանախցի ծիսական մաքրման համար:*

Օջախները բնակարանային համալիրներում: *Կացարաններում տեղադրվում էին մեկ կամ երկու, հազվադեպ՝ ավելի օջախներ: Զույգ օջախներ հայտնաբերված են Շենգավթի №2, Նորաբացի №5, Կառնուտի, Բադաանիի, Ծղրակառայի, Ամիրանիս-Գորայի IX և XXIX, Քյուլ-թեփե 2-ի VIII հորիզոնի, Յանիկ-թեփեի №7 և 33 կացարաններում*[7]*: Մինգեչաուրի բնակավայրի կացարաններում հայտնաբերված է 3-ից 10 օջախ: Հատկանշական է, որ 72 մ² տարածքով №4 կացարանում հաստատագրված է պատերին զուգահեռ երկու շարքով տեղադրված 10 օջախ, ընդ որում շարքերն իրարից զատվում էին ոչ խոր խրամատով*[8]*: Այս ամենը հուշում է, որ շինությունն ընկալվել է որպես միասնական համալիր և կարող էր ունենալ գործառական այլ նշանակություն: Կացարաններում և դրանց անմիջական հարևանությամբ տեղադրված օջախներն ըստ տեղադրության կարելի է բաժանել մի քանի խմբի:*

*Ա)* Կացարանի կենտրոնում տեղադրված օջախներ: *Դեռևս էնեոլիթում դրանք հանդես են գալիս որպես տնտեսական օջախներ (Իմիրիս-Գորայի №8-10, 38 կացարաններ): Կենտրոնական օջախներն առավել լայն տարածում են ստանում վաղ բրոնզում (Շենգավիթ, Արևիկ, Գառնի, Կառնուտ,*

---

г а д з е. Памятники Триалети эпохи ранней и средней бронзы. Тбилиси, 1974, с. 8.

[6] *Է. Խ ա ն զ ա դ յ ա ն. Էլառ-Դարանի. Երևան*, 1979, *էջ* 27-39, А. М н а ц а к а н я н. Археологические раскопки на осушенной территории оз. Севан. – "Советская археология" (далее – СА), т. XXIII, М., 1959, с. 187; В. П. Л ю б и н. Археологическая разведка в окрестностях города Сталинира. – "Краткие сообщения Института истории материальной культуры" (далее – КСИИМК), вып. 60, 1955, с. 17–18.

[7] С. А. Е с а я н. Ереван. Ереван, 1969, с. 10; Г. И. М и р ц х у л а в а, Н. Д. М и р ц х у л а в а, Т. Д. С о н г у л а ш в и л и. Работы археологической экспедиции Иорского ущелья. – Полевые археологические исследования в Грузии (далее – ПАИ) в 1980 г. Тбилиси, 1982, с. 29; о н и ж е. Работы археологической экспедиции Иорского ущелья. – ПАИ в 1981 г. Тбилиси, 1983, с. 16; В. Г. А л и е в, А. Г. С е и д о в, С. Г. А ш у р о в. Археологические исследования слоя ранней бронзы Кюль-тепе 2. – "Археологические и этнографические исследования в Азербайджане" (далее – АЭИА) в 1985 г., Баку, 1986, с. 11-12; Г. Е. А р е ш я н. Норабац – новый памятник эпохи бронзы. – "Археологические открытия в 1979 г." (далее – АО). М., 1980, с. 423; Р. Б а д а л я н. Зооморфные очажные подставки эпохи ранней бронзы из Карнута. – "Вестник общественных наук" (далее – "Вестник"), 1985, №8, с. 95; C h. B u r n e y. Circular Buildings at Yanik Tepe in North West Iran.– "Antiquity", vol. 35, №139, Cambridge, 1961, p. 237; I d e m. Excavations at Yanik-tepe. North West Iran.– "Iraq", vol. XXIII, pt. II, p. 140.

[8] Г. М. А с л а н о в, Р. М. В а и д о в, Г. И. И о н э. Древний Мингечаур. Баку, 1959, с. 23-25; К. Х. К у ш н а р е в а. Древний Кавказ в IX-I тыс. до н. э. СПб., 1993 с. 76.

*Սղնախներ, Ամիրանիս-Գորա և այլն)*[9]*: Ըստ Ռգիսականի կենտրոնական օջախ տեղադրված էր Ալկինոյի պալատում: Օջախի կենտրոնական տեղադրում հիշատակվում է նաև Ռիգվեդայում՝ Ագնիին նվիրված հիմներից մեկում*[10]*:*

*Բ) Պատի մոտ տեղադրված օջախներ: Լայնորեն տարածված էին դեռևս էնեոլիթյան դարաշրջանից (Շուլավերիս-Գորա, Իմիրիս-Գորա, Թեղուտ)*[11]*: Վաղ բրոնզում, պատի մոտ տեղադրված օջախները հաստատագրված են Նորաբացի № 5, Մոխրաբլուրի IX հորիզոնի № 43, Գորակայի, Քյուլ-Թեփեի II շերտի № 32, Բաբա Դերվիշի, Յանիկ-Թեփեի № 7 և 33, Քյուլ-Թեփե 2-ի X շինարարական հորիզոնի, Դիլկայայի, Արսլանթեփեի VIB1 հորիզոնի XI a, VIC2 հորիզոնի F, VID հորիզոնի Q, Դեղիրմենթեփեի II հորիզոնի № 2 և 3, Հան Իբրահիմ Շահի VII հորիզոնի 7–9, ինչպես նաև Պուլուրի XI–IX հորիզոնների կացարաններում*[12]*: Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ օջախի տեղադրումը պատի մոտ թեպետ էնեոլիթից ժառանգած ավանդույթ է, սակայն ինքնին դա չի կարելի դիտել որպես վաղ շրջանի հատկանիշ:*

---

[9] А. И. Д ж а в а х и ш в и л и. Строительное дело и архитектура поселений Южного Кавказа V-III тыс. до н. э. Тбилиси, 1975, с. *56-57, 62. Ս. Հ. Ս ա ր դ ա ր յ ա ն. Նախնադարյան հասարակությունը Հայաստանում. Երևան, 1967, նկ. 36,* Т. Н. Ч у б и н и ш в и л и. *Նշվ. աշխ., էջ 62–63;* З. Э. М а х а р а д з е. Поселение Цихиа-Гора и проблема периодизации культур эпохи бронзы на территории Грузии.— В сб.: "Между Азией и Европой. Кавказ в VI-I тыс. до н. э." СПб., 1996, с. 74; Л. А. П е т р о с я н. Раскопки памятников Кети и Воскеаска (III-I тыс. до н.э.). Ереван, 1989, с. 14-16; И. Н а р и м а н о в. Первый и второй холмы Бабадервиша.— "Дзиебани", вып., VI, Тбилиси, 2001, с. 14; O. B i l g i. Koskerbabahöyuk 1978.– "Anatolian Studies" (*այսուհետև՝* AS), vol. XXIX, L., 1979, p. 203; A. S c h a c h n e r. Von der Rundhütte zum Kaufmannshaus. Kulturhistorische Untersuchungen zur Entwicklung prähistoscher Wohnhäusen in Zentral.-, Ost.- und Südostanatolien. Bd. 2, Oxford, 1999, S. 38, 80; М. Г. Г а д ж и е в. Поселения и жилища Дагестана эпохи ранней бронзы (к истории древней архитектуры).— В кн.: "Древняя и средневековая архитектура Дагестана". Махачкала, 1989, с. 25-27; Е. Б а й б у р т я н. Шенгавитское поселение; о н ж е. Последовательность развития древнейших культур в Армении (рукопись). Архив Гос. музея истории Армении, папка №2, с 25-29; О. А. А б и б у л а е в. Энеолит и бронза на территории Нахичеванской АССР. Баку, 1980, с. 84-92; Э. В. Х а н з а д я н. Раннебронзовое поселение близ с. Аревик.— СА, 1969, №4, с. 154; A. P a l m i e r y.— AS, vol. XXXI, L., 1981, p. 207-208.

[10] *Հ ո մ ե ր ո ս. Ոդիսական (այսուհետև՝ Ոդ.), VI, 305. Երևան, 1965,* Р и г в е д а. *(այսուհետև՝ Ռվ.). I, 60, 4,* Мандалы I-IV, М., *1989. Այսուհետև Ոդիսականի և Ռիգվեդայի հղումները տեքստում (Ոդ. Ռվ.):*

[11] *Ռ. Թ ո ր ո ս յ ա ն. Թեղուտի վաղ երկրագործական բնակավայրը – Երևան, 1976, էջ 29, 31, 33-34, 39,* А. И. Д ж а в а х и ш в и л и, *Նշվ. աշխ., էջ 24, 26.*

[12] *Գ. Ա րե շ յ ա ն, Ե. Ա ս ա տ ր յ ա ն. Հայագիտական կենտրոնի 1973–1983 թթ. հնագիտական աշխատանքները.— «Բանբեր Երևանի համալսարանի» (այսուհետև՝ ԲԵՀ), հ. 3, 1985, էջ 203; Հայկական ճարտարապետության պատմություն. Երևան, 1996, էջ 34, 36:* Г. Г. П х а к а д з е, А. З. О р д ж о н и к и д з е. Итоги работы Сачхерской археологической экспедиции.— ПАИ, 1981, с. 15-16; C h. B u r n e y. Circular buildings..., p. 237; I b i d. Excavations..., p. 140; A. S c h a c h n e r. *Նշվ. աշխ., հ. 1, էջ 134; հ. 2, աղ. 33–34, 64, 67, 74, 125;* И. Г. Н а р и м а н о в. Акстафачайское поселение близ г. Казаха.— СА, 1964, № 4, с. 347; О. А. А б и б у л а е в. *Նշվ. աշխ., էջ 85–86;* В. Г. А л и е в, А. Г. С е и д о в, С. Г. А ш у р о в. *Նշվ. աշխ., էջ 11–12.*

*Գ) Կացարանների սահմաններից դուրս տեղադրված օջախներ: Հայտնի են դեռևս էնեոլիթից (Աղաբլուր, Իմիրիս-Գորա, Քուուջուլթեփեի B հորիզոն)*[13]*: Վաղ բրոնզի հուշարձաններում, բակում տեղադրված օջախներ հաստատադրված են Դեղիրմենթեփե, Թեթրի Ծղարո և Բույուկ-թեփե Հույուք բնակավայրերում*[14]*: Պրիամոսի տունը նկարագրելիս Վերգիլիոսը նշում է, որ օջախ-զոհարանը տեղադրված էր պալատի բակում: Հնդկական ընտանեկան ծեսերի գրքում՝ Աշվալայանա-Գրիխյասուտրայում նկարագրվում է, թե ինչպես կարելի է տան բակում կառուցել օջախ-զոհարան*[15]*: Այսպիսով, ելնելով կացարաններում օջախների տեղադրման վայրից, կարելի է եզրակացնել, որ օջախի տեղադրման վայրի քննությունը բավարար չէ դրա գործառական դերի որոշման համար:*

*Ըստ պատրաստման եղանակի, կարելի է զատել օջախների մի քանի խումբ: Ա) Քարով շարված օջախներ: Հնավայրերում հաստատագրված են կլոր և ուղղանկյուն քարե օջախներ: Կլոր քարե օջախներ հայտնաբերված են Շիրակավան, Մղրակարա, Էլառ բնակավայրերում*[16]*: Ուղղանկյուն հորինվածքով քարե օջախներ հայտնաբերված են Սղնախների №2 կացարանի I սենյակում, Քոսի Ճոթերում, Հառիճում, Քյուլ-թեփե 2-ի X շինարարական հորիզոնում, Մոխրաբլուրի IX հորիզոնի №43 կացարանում*[17]*: Եռանկյունաձև կերտվածք ուներ Դովրիի բնակավայրից գտնված օջախը*[18]*: Քարե օջախներ հաստատագրված են նաև Ղարաթյոփեկթեփեում*[19]*: Բ) Օջախային հորեր: Նմանատիպ օջախներ հայտնի են դեռևս էնեոլիթյան դարաշրջանից (Իմիրիս-Գորայի №35 կացարան)*[20]*: Օջախային հորեր հաստատադրված են Կնոբալիում, Կոդայում, Բաբա-Դերվիշում, Լուդովոյեում*[21]*:*

---

[13]А. И. Д ж а в а х и ш в и л и. *Նշվ. աշխ., էջ 53–54;* A. S c h a c h n e r. *Նշվ. աշխ., հ. 2, աղ. 84, Ադաբլուրի էնեոլիթյան բնակավայրի պեղումները՝ Գ. Արեշյանի:*

[14]A. S a g o n a, E. P e m b e r t o n, I. M c P h e e. Excavations at Buyuk-tepe hoyuk 1992. Third Preliminary Report.– AS, vol. XLIII, L., 1993, p. 71; A. S c h a c h n e r. *Նշվ. աշխ., հ. 2, աղ. 64;* Г. Ф. Г о б е д ж и ш в и л и. Селище Тетри-Цкаро. Тбилиси, 1978, с. 25.

[15] В е р г и л и й. Энеида *(այսուհետև՝ էն) III, 515,* М., 1971; Ашвакаяна Грихья сутра (*այսուհետև՝ Ա. Գ.*) I, 3.— В. кн.: "История и культура Древней Индии (тексты)". М., 1990. *Նշված աղբյուրների վրա հղումը՝ այսուհետև տեքստում:*

[16] *Ռ. Թ ո ր ո ս յ ա ն, Օ. Խ ն կ ի կ յ ա ն, Լ. Պ ե տ ր ո ս յ ա ն. Հին Շիրակավան. Երևան, 2000, էջ 16,* Г. И. М и р ц х у л а в а, Н. Д. М и р ц х у л а в а, Т. Д. С о н г у л а ш в и л и. Археологические работы Иорского ущелья.— ПАИ, 1980, с. 22; Е. Б а й б у р т я н. Последовательность..., с. 23.

[17] Л. А. П е т р о с я н. Раскопки..., с. 14; Т. С. Х а ч а т р я н.— *Նշվ. աշխ., էջ34;* В. Г. А л и е в, А. Г. С е и д о в. Раскопки в Кюль-тепе 2 в 1979 г.— АЭИА, 1979, Баку, 1985, с. 10; Э. В. Х а н з а д я н. Энеолитическое поселение близ Кировакана.— СА, 1963, №1, с. 153.

[18] *Ս. Հմայակյանի անձնական հաղորդումը:*

[19] Г. С. И с м а и л о в, О. А. Д а н и е л я н. Работы Физулинского отряда.— АО, 1986, М., 1988, с. 450.

[20] А. И. Д ж а в а х и ш в и л и. *Նշվ. աշխ., էջ 56–57.*

[21] Г. Г. П х а к а д з е, К. С. К а л а н д а д з е, А. З. О р д ж о н и к и д з е. Результаты работ Абастуманской экспедиции.— ПАИ, 1980, Тбилиси, 1982, с. 26; Г. Г. П х а к а д з е. Раскопки в Кода.— АО, 1970, М., 1971, с. 458; И. Г. Н а р и м а н о в, Г. С. И с м а и л о в. Акстафачайское поселение близ г. Казаха.— СА, 1964, №2, с. 345; Г. М. А с л а н о в, Р. М. В а и д о в, Г. И.

Նշված խմբում առանձնապես պետք է հիշատակել կավով ծեփված թոնրանման օջախները (Քյուլ-Թեփեի №11 կացարանի տնտեսական կցակառույց, Քյուլ-Թեփե-2-ի III-IV հորիզոններ, Ամիրանիս-Գորա, Շրեշ բլուր, Լուգովոյե, Քոսի Ծոթեր)[22]: Նշված խմբի օջախների ևս մեկ տարատեսակ հաստատագրված է Խիզաննանթ-Գորայի E հորիզոնում, որտեղ ոչ միայն փոսն էր ծեփված կավով, այլև հատակի մակարդակի վրա ծեփած էր ափսեանման շուրթ[23]: Գ) Կավե օջախներ: Այս օջախները դիտարկելիս նախ պետք է հիշատակել ձվաձև կավե օջախը՝ հայտնաբերված Մոխրաբլուրի VIII հորիզոնում: Նմանատիպ օջախները էնեոլիթյան բնակավայրերում նախատեսված էին սրբազան մոխրի պահպանման համար[24]: Կավե օջախների ևս մեկ տիպ ներկայացնում են անոթի տեսք ունեցող կրակարանները (Ամիրանիս-Գորա, Արանոսխևի, Քյուլ-Թեփե, Բաբա-Դերվիշ)[25] (աղ. 1, 4-5): Որոշակի յուրահատկություն ունի Նորաբացում հայտնաբերված օջախը, որը ներկայացնում է հատակի մեջ ծեփված անոթի վերին մասը, սրա ստորին հատվածը լցոնած է ավազով[26]: Օջախների նշված տիպի առավել զարգացած նմուշը, ըստ Տ. Խաչատրյանի, Հառիճի օջախն է, որը ներկայացնում է հարթ հատակով օվալաձև բաժակ՝ ստորին մասում բացվածքով: Օջախի առջևի մասում տեղադրված են երկու եղջերաձև ելուստ: Երեք ելուստներով էր զարդարված նաև Շենգավիթի ստորին հորիզոնից հայտնաբերված «բաժականման» օջախը[27]: Օջախների մեկ այլ տիպ հայտնաբերված է Գառնիից: Այն բաղկացած է երկու մասից. օջախի հիմքից և դրան ամրացված գլանաձև կրակարանից: Գլանաձև օջախ հայտնաբերված է նաև Խիզաննանթ-Գորայի E հորիզոնից: Հատկանշական է, որ օջախն ուներ հորիզոնական փռված եզր և փալաձև ելուստ[28]: Հաջորդ տիպը՝ սկավառակաձև և շրջանաձև օջախներն են: Նմանատիպ կերտվածքներ հայտ-

---

И о н э. Древний Мингечаур. Баку, 1959, с. 23-25; Р. М. М у н ч а е в. *Նշվ. աշխ., էջ 346–347.*

[22] А. И. Д ж а в а х и ш в и л и. *Նշվ. աշխ., էջ 152;* В. Г. А л и е в. Раскопки поселения Кюль-тепе 2 в 1979 г.— АО, 1979, М., 1980, с. 419; О. А. А б и б у л а е в. *Նշվ. աշխ., էջ 94;* Р. М. М у н ч а е в. *Նշվ. աշխ., էջ 346;* Е. А. Б а й б у р т я н. Последовательность..., с. 22· Э. В. Х а н з а д я н. Энеолитическое поселение..., с. 153.

[23] А. И. Д ж а в а х и ш в и л и. *Նշվ. աշխ., էջ 146.*

[24] *Գ. Ա ր ե շ յ ա ն, Հ. Ս ի մ ո ն յ ա ն, Գ. Ս ա ր գ ս յ ա ն, Գ. Ք ո չ ա ր յ ա ն, Հ. Օ հ ա ն յ ա ն. Հայագիտական կենտրոնի 1977–1978 թթ. դաշտային հնագիտական աշխատանքները.— ԲԵՀ, 1979, հ. 2, էջ 206;* А. И. Д ж а в а х и ш в и л и. *Նշվ. աշխ., էջ 24, 26.*

[25] М. Г. Г л о н т и. Поселения Арагвского ущелья. Душетская конференция, посвященная взаимоотношениям между горными и равнинными регионами. Тбилиси, 1984, с. 38; А. И. Д ж а в а х и ш в и л и. *Նշվ. աշխ., էջ 152;* О. А. А б и б у л а е в. *Նշվ. աշխ., էջ 94;* И. Г. Н а р и м а н о в. *Նշվ. աշխ., աղ. 1.*

[26] Г. Е. А р е ш я н. Норабац — новый памятник эпохи бронзы.— АО, 1979, с. 423.

[27] Т. С. Х а ч а т р я н. *Նշվ. աշխ., էջ 72;* Е. А. Б а й б у р т я н. Последовательность..., с. 35.

[28] *Է. Վ. Խ ա ն զ ա դ յ ա ն. Գառնի IV. Երևան, 1969, էջ 18.* Я. А. К и к в и д з е. Раннебронзовое поселение Хизаннантгора. Тбилиси, 1970, с. 95, таб. XXVIII, рис. 4.

*նի են Ամիրանիս-Գորայից, Կարազից[29]: Օջախների մեկ այլ տիպ են ներկայացնում պայտաձև օջախները, նման օջախներ ի հայտ են եկել Յանիկթեփեի №33 կացարանից, Դեղիրմենթեփեի I a և b հորիզոնների №5 ու II հորիզոնի №3 կացարանների բակից[30]: Օջախների այս խմբին մոտ է Մոխրաբլուրից հայտնաբերված կիսակլոր օջախը, որը զարդարված է չան արձանիկով[31]: Շենգավիթյան մշակույթի արեալում առավել տարածված են կլոր օջախները, որոնք հանդես են գալիս մի շարք տարատեսակներով: Նախ պետք է նշել առանց ելուստների կլոր օջախները (Հառիճ, Շիրակավան, Շենգավիթ, Թել Ջուդայիդահի H հորիզոն)[32]: Սրանց հաջորդ տարատեսակը ներկայացված է ելուստավոր օջախներով: Նմանատիպ օջախներ հայտնաբերված են Շենգավիթից, Նորշունթեփեից, Ջրահովտից, Կառնուտից և մի շարք այլ բնակավայրերից: Դրանք իրենց ողջ նմանությամբ հանդերձ ունեն որոշակի յուրահատկություններ: Այսպես, Շենդավիթի №1 կացարանում հաստատագրված օջախն ուներ դեպի ներս բարձրացող երեք եռանկյունաձև ելուստ (աղ. 1, 1): Բացի այդ №1 օջախի ելուստների հիմքում 8 սմ տրամագծով փոսիկներ կային[33]: №2 կացարանի ելուստներն ունեն ոչ թե եռանկյունաձև, այլ սեղանաձև տեսք: Նմանատիպ մի օջախ պսակում է նաև Ջրահովտի ծիսական կառույցը[34]: Նույն կացարանում հայտնաբերված երկրորդ օջախն ուներ ոչ թե երեք, այլ չորս իրար դեմ դիմաց տեղագրված ելուստ: Բացի այդ, եթե №1–3 օջախները զարդարված են բռնակներով, ապա №4 օջախի պատերն արտաքին կողմից ներճկված են: Ելուստավոր օջախների ևս մեկ տեսակի պատկեր կա Շենգավիթի պեղումներից հայտնաբերված սև փայլեցված թասի ներքին մասում: Ելուստները տեղագրված են 120 աստիճան թեքությամբ: Ելուստների միջև ընկած տարածությունն ունի սեղանաձև տեսք[35]: Օջախների չենդավիթյան տիպին մոտ են կանգնած Կուրի ավազանից և հարակից շրջաններից գտնված օջախները: Այստեղ ևս ելուստների թիվը տատանվում է մեկից (Գորակա) հինգը (Ցիխիա-Գորա)[36]: Ելուստավոր օջախների հաջորդ տիպը*

---

[29] Т. Н. Чубинишвили. *Նշվ. աշխ., էջ 64–65.*

[30] Ch. Burney. Excavations at Yanik-tepe, Noorth West Iran.- "Iraq", vol. XXIII, pt. 2, L., 1961, p. 142, pl., XXIV (1); A. Schachner. *Նշվ. աշխ., հ. 2, աղ. 64.*

[31] С. А. Есаян. Скульптура древней Армении. Ереван, 1981, с. 13.

[32] *Ս. Հ. Սարդարյան. Նշվ. աշխ., նկ. 36, Հայկական ճարտարապետության պատմություն. հ. I, Երևան, 1996, էջ 56, Ռ. Թորոսյան, Օ. Խնկիկյան, Լ. Պետրոսյան. Հին Շիրակավան. Երևան, 2002, էջ 56,* Т. С. Хачатрян. *Նշվ. աշխ., էջ 71.*

[33] Е. А. Байбуртян. Последовательность..., с. 63-64.

[34] *Է. Վ. Խանզադյան. Ջրահովիտ.– Հայաստանի հնագույն մշակույթը, պր. 3.– Տ. Խաչատրյանի 70-ամյակին նվիրված գիտաժողովի նյութեր. Երևան, 2003, էջ 17, նկ. 3,* Е. А. Байбуртян. Культовый очаг из раскопок Шингавитского поселения.- "Вестник древней истории" (далее – ВДИ), 1938, №4, с. 256-257; H. Hauptaman. Norsuntepe, 1973.– AS, vol. XXIV, p. 43-44.

[35] *Ս. Հ. Սարդարյան. Նշվ. աշխ., էջ 187, աղ.* LXI:

[36] Г. Г. Пхакадзе, А. З. Орджоникидзе. Итоги работы Сачхерской археологической экспедиции.– ПАИ, 81. Тбилиси, 1984, с. 16; Г. И. Мирцхулава, Н. Д. Мирцхулава, Т. Д. Сонгулашвили. Археологические работы Иорского ущелья, с. 22; А. М. Апакидзе, В. В. Николайшвили, Г. Д. Гиунашвили, Т. В. Джапаридзе,

*հայտնաբերված է Կարազում: Ի տարբերություն շենգավիթյան տիպին, կարազյան օջախներն ունեն ընդգծված փայտաձև տեսք[37]: Կարազյան տիպի օջախ հայտնաբերված է նաև Նորշունթեփեի XVIII և XX հորիզոններում[38]: Ցալատիպ ելուստներ կան նաև Հառիճի օջախներում (աղ. 1, 10): Առանձնահատուկ պետք է նշել Հառիճի օջախների մարդակերպ ելուստները[39] (աղ. 2, 6):*

Օջախների հենակներ: *Շենգավիթյան մշակույթի օջախային համալիրներում կարևոր դեր են կատարում օջախների գոհարան-հենակները: Ա)* Անոթի տեսք ունեցող հենակներ: *Հայտնաբերված են Էլառի և Մուխանի դամբարաններից (աղ. 1, 6), Գառնիից, Մեծամորից, Ղարաքյոփեկթեփեի վաղ բրոնզեդարյան ստորին հորիզոններից, Խորումբուլաղից, Քոսի Ճոթերից, Բաբա Դերվիշից[40]: Ողջ նմանությամբ հանդերձ, տվյալ խմբի հենակներն ունեն որոշակի առանձնահատկություններ: Այսպես, Շրեշ բլուրի, Գառնիի նմուշներում իրանն ուռուցիկ է: Որոշակի ուռուցիկություն կա նաև Էլառյան որոշ օրինակներում: Սակայն Բաբա Դերվիշի, Էլառի, ինչպես նաև Վրաստանի թանգարանում պահպանվող մի նմուշում իրանը գրեթե գլանաձև է: Բացի այդ, եթե հենակների մեծամասնությունն ունի թեք շուրթ, ապա Մեծամորում հաստատագրված է գրեթե հորիզոնական շուրթ[41]: Բ)* Շրջանաձև հենակներ: *Հայտնաբերված են Մոխրաբլուրից, Հառիճից, Սև բլուրից, Շենգավիթից, Ղարաքյոփեկթեփեից, Թաբարրա էլ Աքրադից (աղ. 1, 8, աղ. 2, 1): Մոխրաբլուրի հենակի կոմպոզիցիայի կենտրոնում երեք փոսիկ կա (երկու փոքր և մեկ մեծ), ևս երկու մեծ փոսիկ տեղադրված են օջախի տրամագծորեն հակառակ կողմում[42]: Գ)* Գլանաձև հենակներ: *Հայտնաբերված են Ղարաքյոփեկթեփե, Գալգալաթլի, Լուգովոյե, Օզնի*

Г. К. Нариманашвили, В. Г. Садрадзе, А. Н. Сихуралидзе. Мцхетская экспедиция 1980 г. — ПАИ, 1980, Тбилиси, 1983, с. 36, таб. LXI; А. И. Джавахишвили. *Նշվ. աշխ., էջ 138–139*; И. Нариманов. *Նշվ. աշխ., էջ 64*; З. Э. Махарадзе. *Նշվ. աշխ., էջ 73.*

[37] Эпоха бронзы Кавказа и Средней Азии. Ранняя и средняя бронза Кавказа, сер. Археология. (далее — Ранняя бронза), М., 1994, таб. 2 (23).

[38] H. Hauptman. Norsuntepe 1974. — AS, vol. XXV, L., 1975, p 37.

[39] С. А. Есаян. Скульптура древней Армении, таб. 15 (1-5).

[40] *Է. Վ. Խանզադյան, Գառնի IV, էջ 18-20, Է. Խանզադյան, Կ. Մկրտչյան, Է. Պարսամյան. Մեծամոր. Երևան, 1973, էջ 20, Ս. Հ. Սարդարյան. Նշվ. աշխ., աղ. LXXII (1), Է. Վ. Խանզադյան. Հայկական լեռնաշխարհի մշակույթը մ.թ.ա. III հազ. էջ 67,* М. И. Алекперова. Очажные подставки раннебронзового поселения Каракепектепе. — АЭИА, 1985, Баку, 1986, с. 22-23; И. Г. Нариманов, Г. С. Исмаилов. *Նշվ. աշխ., էջ 345, նկ. 2(2)*; Г. С. Исмаилов. Археологическое исследование древнего поселения Баба Дервиш. Баку, 1977, с. 43, таб. XII.

[41] *Է. Վ. Խանզադյան. Էլառ-Դարանի. Երևան, 1979, նկ. 44,* И. Г. Нариманов, Г. С. Исмаилов. *Նշվ. աշխ., էջ 345; նկ. 2(2), Է. Խանզադյան, Կ. Մկրաչյան, Է. Պարսամյան. Մեծամոր, էջ 20,* Б. А. Куфтин. Археологическая маршрутная экспедиция в Южную Осетию и Имеретию. Тбилиси, 1948, таб. А.

[42] *Է. Խանզադյան. Հայկական լեռնաշխարհի մշակույթը..., էջ 65,* М. И. Алекперова. *Նշվ. աշխ., էջ 22,* S. Hood. Excavations at Tabarra el Akrad. — AS, vol. 1, L., 1951, pl. 7 (21c); Т. С. Хачатрян. *Նշվ. աշխ., էջ 71.*

բնակավայրերում (աղ. 2, 8)[43]: Դ) Բրգաձև և կոնաձև հենակներ: Այդպիսի հենակներ հայտնի են Գառնիից, Շենգավիթից, Շրեշ բլուրից, Լուգովոյեից (աղ. 1, 9, աղ. 2, 3): Որոշ նմուշներ ունեն կիսագնդաձև կանթ: Մի փոքր տարբերվում են Ղարաքյոփեկթեփեի և Կաբազ Կուրթանի նմուշները, որոնք կողերից մի փոքր ներճկված են[44]: Ղարաքյոփեկթեփեի հենակը նման է Գեոքսուրյան օազիսի Յալանգաչ-թեփե բնակավայրից գտնված զոհարանի մոդելներին[45]: Ե) Կոճղաձև հենակներ: Նմանատիպ հենակներ հաստատագրված են Գառնիի պեղումներից[46]: Զ) Աղյուսաձև և նավակաձև հենակներ: Այս տիպի առավել պարզունակ ձևերը ներկայացված են բռնակներով աղյուսներով և հաստատագրված են Գալգալաթլիից[47]: Նավակաձև հենակները ներկայացնում են ուղղանկյուն կամ եռանկյուն կերտվածքներ, որոնց առջևի մասը եղջերազարդ էր: Աղյուսաձև հենակներին առավել մոտ են կանգնած ուղղանկյուն եղջյուրավոր հենակները (Արարատ, Քյուլ-թեփե): Լուգովոյե բնակավայրից հայտնաբերված նմանատիպ հենակի վրա անցք կա ինչպես վերին, այնպես էլ կողային մասում: Նմանատիպ հենակ հայտնաբերված է նաև Խիզաննանթ-Գորայում, սակայն այս վերջին նմուշում եղջյուրներն ավելի սխեմատիկ են պատկերված[48]: Եղջյուրավոր հենակների եւս մեկ տիպ հայտնաբերված է Գառնիից և ներկայացնում է կտրվածքում սեղանաձև կերտվածք[49]: Եվս մեկ խումբ ներկայացնում են եռանկյուն, կլորացված անկյուններով կերտվածքները (Արևիկ, Գառնի, Ղարաքյոփեկթեփե, Խիզաննանթ-Գորա) (աղ. 2, 7)[50]: Նմանատիպ հենակների եւս մեկ տիպ հայտնաբերված է Սերժենյուրտ II բնակավայրում և Շաու Լեգետ քարանձավում: Տվյալ դեպքում հենակն ուներ ոչ թե երկու, այլ չորս եղջյուր[51] (աղ. 2, 5): Եվս մեկ տարբերակ ներ-

---

[43] Г. С. Исмаилов. Древние поселения междуречья Гуручая и Кенделенчая. Баку, 1981, таб. IV, М. Г. Гаджиев. Раскопки памятников ранней бронзы в горном Дагестане.– АО, 1970, М., 1971, с. 104-105; Р. М. Мунчаев. *Նշվ. աշխ., նկ. 78(2)*; Л. Жоржикашвили, Э. Гогадзе. *Նշվ. աշխ., էջ 35, աղ. 21(1)*.

[44] *Է. Վ. Խանզադյան. Գառնի IV, էջ 69, աղ XVII, XXI (4), Է. Վ. Խանզադյան. Հայկական լեռնաշխարհի մշակույթը..., աղ. VII*, Г. С. Исмаилов. Древние поселения..., таб.. IV; М. И. Алекперова. *Նշվ. աշխ., էջ 22–23*; Ch. Burney. Eastern Anatolia in Chalcolithic and Early Bronze Age.– AS, vol. VIII, L., 1958, p. 190-191; M. Gadzhiev, Ph. Wellesley, R. Magomedov, D. Stronach, Sh. Gadzhiev. Daghestan. American Archaeological Investigation in Daghestan, Russia 1997-1999.– "Eurasia Antiqua", Bd. 6, Berlin, 2000, p. 55, pl. 9.

[45] И. Н. Хлопин. Геоксюрская группа поселений эпохи энеолита. М., 1964, с. 164.

[46] *Է. Վ. Խանզադյան. Գառնի IV, էջ 69:*

[47] М. Г. Гаджиев. Раскопки памятников...,с. 105.

[48] Я. А. Киквидзе. Раннебронзовое поселение..., таб. VIII, рис. 2; Р. М. Мунчаев. *Նշվ. աշխ., էջ 158*, С. А. Есаян. Скульптура..., таб. XII (3).

[49] *Է. Վ. Խանզադյան. Գառնի IV, աղ. XVIII:*

[50] *Նույն տեղում, աղ. XIX*, Я. А. Киквидзе. Раннебронзовое поселение..., таб. VIII, рис. 1; С. А. Есаян. Скульптура..., таб. XII (1-2); Г. С. Исмаилов. Древние поселения..., таб. IV.

[51] Р. М. Мунчаев. *Նշվ. աշխ., աղ.* 78 (8-10); В. П. Любин. Энеолитический комплекс из грота Шау-Легет.– "Краткие сообщения Института археологии" (далее – КСИА), вып. 108, М., 1966, рис. 17 (9); А. А. Иерусалим-

*կայացնում են քառոտանի, երկու կողմ տարածվող եղջյուրներով հենակները (Ջրահովիտ, Արարատ, Մոխրաբլուր) (աղ. 2, 9)*[52]*: Քառոտանի հենակների ևս մեկ տարբերակ են ներկայացնում Սերժենյուրտից և Խիզաննանթ-Գորայից հայտնաբերված կիսասֆերիկ հենակները*[53] *(աղ. 2, 4): Եղջյուրավոր զոհարան-հենակներ հայտնի են նաև Թել Բրակից, Մերսինի XVI.–XII շերտերից, Բեյջիխսուլթանից, Թեփե Գավրայից*[54]*: Է)* Քառանկյուն կամ եռանկյուն դրոցներ երեք կամ չորս թեք ոտքերի վրա. *Նման կերտվածքներ հաստատագրվել են Հաուճից, Շրեշ բլուրից, Մոխրաբլուրից*[55]*: Ը)* Պայտաձև հենակներ: *Սրանց առաջին ենթատիպը ներկայացված է հարթ հատակով կերտվածքներով (Մոխրաբլուր, Գառնի, Տիգնիս, Քյուլ-թեփե, Շենգավիթ, Ամիրանիս-Գորա, Շաու Լեգետ, Պուլուր, Թաքարրա էլ Աքրագ, Ջինիս Հույուք)*[56]*: Որոշ հենակներ կենտրոնական մասում ելուստ ունեին (Գառնի, Բերքաբեր)*[57]*: Հարթ հատակով պայտաձև հենակների ևս մեկ տեսակ հայտնաբերված է Քյուլ-թեփեից և Շիրակավանից: Դրանք իրենց ձևով չերեփանման են (աղ. 1, 2)*[58]*: Պայտաձև հենակների հաջորդ տեսակը եռոտանի հենակներն են (Շենգավիթ, Խիզաննանթ-Գորա, Մոխրաբլուր, Գառնի)*[59] *(աղ. 2, 2): Հատկանշական է, որ Մոխրաբլուրի և Գառնիի որոշ օրինակներում ոտքերը շատ թույլ են արտահայտված, ինչը մոտեցնում է նշված նմուշները տափակ հատակով հենակներին: Քառոտանի պայտաձև հենակներ հայտնաբերված են Կառնուտից և Շենգավթից* [60]*(աղ 1, 7): Նույնքան բազմազան են պայտաձև հենակների զարդանախշման մոտիվ-*

---

ская, В. И. Козенкова, Е. И. Крупнов. Древние поселения у с. Серженьюрт в Чечено-Ингушетии. – КСИА, вып. 94. М., 1963, рис. 11 (8).

[52] *Է. Վ. Խանզադյան. Հայկական լեռնաշխարհի մշակույթը..., էջ 66 աղ. VII.* С. А. Есаян. Скульптура..., таб XIV-XV.

[53] Р. М. Мунчаев. *Նշվ. աշխ., աղ. 78 (5-6);* А. Киквидзе. Раннебронзовое поселение..., таб. VIII, рис. 3; А. А. Иерусалимская, В. И. Козенкова, Е. И. Крупнов. *Նշվ. աշխ., նկ. 11 (7).*

[54] Н. Шаншашвили. Происхождение и функции очажных подставок куро-аракской культуры. – "Археология, этнология и фольклористика Кавказа". Св. Эчмиадзин, 2003, с. 73.

[55] *Է. Վ. Խանզադյան. Հայկական լեռնաշխարհի մշակույթը..., աղ. VII,* Т. С. Хачатрян. *Նշվ. աշխ., էջ 73.*

[56] *Նույն տեղում, աղ.* XVII, С. А. Есаян. Скульптура..., таб. X-XI (1-3); В. П. Любин. Энеолитической комплекс..., рис. *17 (5);* Ранняя бронза, таб. 2 (23); О. А. Абибулаев. Некоторые итоги изучения холма Кюль-тепе в Азербайджане. – СА, 1963, № 3, с. 165, рис. 7(7); S. Hood. *Նշվ. աշխ., էջ 9,* T. Takaoglu. Hearth Structures in the Religious Pattern of Early Bronze Age Northeast Anatolia. – AS, vol. 50, L., 2000, p 12, pl. 2a.

[57] *Է. Վ. Խանզադյան. Գառնի IV, աղ. XV,* Г. С. Есаян. Раскопки средневекового поселения в Беркабере. – "Вестник", 1985, № 6, с. 100.

[58] *Ռ. Թորոսյան, Օ. Խնկիկյան, Լ. Պետրոսյան. Նշվ. աշխ., աղ. II (8):*

[59] *Է. Վ. Խանզադյան. Հայկական լեռնաշխարհի մշակույթը..., աղ. XVII, Է. Վ. Խանզադյան. Գառնի IV, աղ. XIV (2), Ս. Հ. Սարդարյան. Նշվ. աշխ., աղ. XLIX (3),* Я. А. Киквидзе. Раннебронзовое поселение..., таб. VIII, рис.5.

[60] Р. Бадалян. Зооморфные очажные подставки..., с. 97; *Քառոտանի զոհարան-հենակը հայտնաբերված է Շենգավթի 2000 թ. պեղումների ժամանակ: Օգտվելով առիթից շնորհակալություն ենք հայտնում Հ. Սիմոնյանին՝ տրամադրած տեղեկատվության համար:*

*ները: Անտրոպոմորֆ պատկերով պայտաձև հենակներ հայտնի են Ամիրանիս-Գորայից, Մոխրաբլուրից, Գառնիից, Պուլուրից, Տիգնիսից, Շենգավթից, Ջինիս Հույուքից, Թաբարրա էլ Աքրադից (աղ. 1, 3, աղ. 2, 10): Մարդակերպ արձանիկը կարող էր տեղագրված լինել ինչպես կենտրոնական հատվածում (Մոխրաբլուր, Գառնի, Տիգնիս, Շենգավիթ, Ամիրանիս-Գորա, Սոս Հույուք), այնպես էլ կողային ելուստների վրա (Գառնի): Թաբարրա էլ Աքրադի հենակում պատկերներ կան ինչպես կենտրոնական հատվածում, այնպես էլ կողային ելուստներին*[61] *(աղ. 1, 3): Մարդակերպ արձանիկների մի շարք նմուշներ ունեն ելուստներ (Շենգավիթ, Մոխրաբլուր, Գառնի)*[62]*: Ամենայն հավանականությամբ, դրանք կարելի է համարել ֆալոսի սխեմատիկ պատկերներ: Ֆալիկ պատկերով էր զարդարված նաև Սոս Հույուկ բնակավայրի օջախի կողային հատվածը*[63]*: Քանդակների մի առանձին խումբ են կազմում եղջյուրավոր տղամարդկանց պատկերները (Ամիրանիս-Գորա, Շենգավիթ)*[64]*: Պուլուրի պայտաձև կերտվածքների մարդակերպ ելուստներն ունեն կանացի սեռական հատկանիշներ: Օջախներից մեկի ելուստները պատկերում են չակներ, որոնց գլուխների ետևից կարծես ևս մեկ գլուխ է երևում: Ս. Եսայանն ու Ե. Անտոնովան առավել հավանական են համարում, որ պատկերված է մայրը մանկան հետ*[65]*: Սատխե բնակավայրում գտնված պայտաձև հենակի կենտրոնական հատվածը ներճկված է*[66]*: Պայտաձև հենակների հաջորդ խումբը կենդանակերպ հենակներն են: Այգօրինակ կերտվածքներ հայտնաբերված են Կառնուտից, Մոխրաբլուրից, Քոսի Ճոթերից, Ամասիայից, Դովրիից, Ապարանից*[67]*: Հարկ է նշել, որ եթե Ամասիայի, Կառնուտի, Շենգավթի առանձին նմուշներում խոյակերպ պատկերները կատարված են բավականաչափ սխեմատիկ, ապա Կառնուտի 1984թ. հայտնաբերված հենակի, ինչպես նաև Շենգավթի հենակներից մեկի խոյի քանդակը չափազանց ռեալիստական է*[68]*: Խոյազարդ պայտաձև հենակներ Մոխրաբլուրում ի հայտ են գալիս դեռևս XI հորիզոնում: Հետագայում պատկերներում ավելանում է սխեմատիզմը: Հարկ է համաձայնել Ռ. Բադալյանի այն տեսակետի հետ, որ կերտվածքներում սխեմատիզմի ավելացումը խորհրդանշում է առարկայի ծիսական իմաստի ընդգծու-*

---

[61] *Է. Վ. Խանզադյան. Գառնի IV, աղ. XV (2),* С. А. Есаян. Скульптура..., таб. X, XI (3), XVI (9); Т. Н. Чубинишвили. *Նշվ. աշխ., աղ. XXII (1);* S. Hood. *Նշվ. աշխ., աղ. 9.*

[62] С. А. Есаян. Скульптура..., таб. X, (1-3), XVI (9).

[63] A. Sagona. Social Idenity and Religious Ritual in the Kura-Araxes Cultural Complex: some observations from Sos hoyük.– "Mediterranean Archaeology", vol. 11, 1998, pl. 4 (5).

[64] Т. Н. Чубинишвили. *Նշվ. աշխ., աղ. XXII (4); Ս. Հ. Սարդարյան. Նշվ. աշխ., աղ. XLIX (6):*

[65] Е. В. Антонова, С. А. Есаян. *Նշվ. աշխ., էջ 233.*

[66] З. К. Кикоидзе, Ф. Л. Коль, Г. М. Миндиашвили, А. З. Орджоникидзе. Раннебронзовые археологические материалы из Южной Грузии.– "Дзиебани", № 2, Тбилиси, 1998, таб. 2, рис. 14.

[67] *Ս. Հ. Սարդարյան. Նշվ. աշխ., աղ. XLIX (3),* Р. Бадалян. Зооморфные очажные подставки..., с. 96, *Է. Վ. Խանզադյան. Խոյի պաշտամունքը.– XII հանրապետական գիտական նստաշրջան, զեկուցումների հիմնադրույթներ. Երևան, 2002, էջ 7:*

[68] *Ս. Հ. Սարդարյան. Նշվ. աշխ., աղ. XLIX (3),* Р. Бадалян. Зооморфные очажные подставки..., с. 96.

*մը[69]: Պայտաձև եղջյուրավոր հենակ հայտնաբերված է նաև Ադաբլուրում[70]:*

Օջախների անմիջական հարևանությամբ գտնված իրեր, կառույցներ և համալիրներ: *Օջախների գործառական դերի պարզաբանման համար անհրաժեշտ է քննել դրանց անմիջական հարևանությամբ գտնված իրերը: Նախ պետք է նշել օջախների հենակները: Օջախային համալիրների հաջորդ հատկանշական գծերից են ածխի պահպանման հորերը (Մոխրաբլուր, Սոս Հույուք, Ծղրակարա, Խիզաննանթ-Գորա E, Գորակա): Մոխրի հորերը կարող էին տեղադրված լինել ինչպես կացարանի սահմաններից դուրս (Ծղրակարա), այնպես էլ անմիջականորեն կացարանում (Գորակա): Հատկանշական է, որ Խիզաննանթ-Գորայի E հորիզոնի հորերում մոխրի հետ հայտնաբերված են օջախների և հենակների բեկորներ[71]: Օջախների անմիջական հարևանությամբ հաճախ տեղադրված էին լինում նստարան-մաստաբաները: Բերիկլդեեբի և Շահլամա II բնակավայրերում նստարանների վրա տեղադրված էին ծխամաններ, ծիսական խեցեղենի այլ նմուշներ[72]: Որոշ բնակավայրերում (Սղնախներ, Քյուլ-Թեփե, Էլար, Քոսի Ծոմեր) օջախների շուրջը հայտնաբերված են կենդանիների արձանիկներ, ինչը հուշում է, որ տվյալ կրակարանները կարող էին օգտագործվել նաև ծիսական նպատակներով[73]: Օջախի մոտ դրված անտրոպոմորֆ կուռքեր հաստատագրված են Բույուկ-Թեփե Հույուք բնակավայրի օջախային հրապարակում[74]: Արևի պաշտամունքի մասին է վկայում Ցիխիա-Գորա բնակավայրում օջախի մոտ հայտնաբերված արևի պատկերով քարը[75]: Առանձին պետք է դիտարկել օջախների տակ և անմիջական հարևանությամբ կատարված թաղումները (Ամիրանիս-Գորայի №XIII կացարան, Օրծկլեբի)[76]:*

---

[69] Р. Бадалян. *Նշվ. աշխ., Գ. Արեշյան, Հ. Սիմոնյան, Գ. Սարգսյան, Գ. Քոչարյան, Հ. Օհանյան. Նշվ. աշխ., էջ 206:*

[70] *Գ. Արեշյան, Ե. Ասատրյան. Նշվ. աշխ., էջ 202:*

[71] Я. А. Киквидзе. Земледелие и земледельческий культ в древней Грузии. Тбилиси, 1988, с. 49; A. Sagona. Social idenity..., p. 22; Г. Г. Пхакадзе, А. З. Орджоникидзе. Итоги работы Сачхерской археологической экспедиции, с. 15; Г. И. Мирцхулава, Н. Д. Мирцхулава, Т. Д. Сонгулашвили. Археологические работы Иорского ущелья, с. 22.

[72] Л. И. Глонти, А. И. Джавахишвили. Новые данные..., с. 85; С. А. Есаян. Древняя культура племен Северо-Восточной Армении. Ереван, 1974, с. 24.

[73] О. А. Абибулаев. Энеолит и бронза..., с. 96; Л. А. Петросян. Раскопки памятников..., с. 14-16; Е. А. Байбуртян. Последовательность..., с. 23; Э. В. Ханзадян. Энеолитическое поселение..., с. 23.

[74] A. Sagona, E. Pemberton, I. Mc Phee. Excavations at Buyuk-tepe Höyük, 1992. Third Preliminary Report.– AS, vol. XLIII, L., 1993, p.71.

[75] Г. Г. Цкитишвили, Д. Л. Гветадзе, Р. М. Квитаишвили, З. Л. Махарадзе, Л. С. Казахишвили. Экспедиция Каспского района.– ПАИ, 1986. Тбилиси, 1991, с. 66.

[76] Т. Н. Чубинишвили. *Նշվ. աշխ., էջ65;* К. К. Кахиани, Э. В. Гвигвишвили, М. С. Дзенекадзе, Г. Г. Каланадзе, З. Р. Цквитинидзе. Археологические исследования Машаверского ущелья.– ПАИ, 1986. Тбилиси, 1991, с. 55.

Այսպիսով, ուսումնասիրելով չենգավթյան մշակույթի օջախները և օջախային համալիրները, դրանց տեղադրությունը և կառուցվածքը, կարելի է հանգել հետևյալ եզրակացությունների. ա) օջախների առանձին տիպեր կատարում էին զուտ ծիսական գործառույթներ, բ) օջախի ծիսական գործառույթը կարելի է որոշել քննելով տվյալների ողջ համալիրը՝ օջախի տեղադրման վայրը, շրջապատող առարկաները, գ) տնտեսական օջախները ևս կարող էին ծառայել ծիսական արարողություններ կատարելու համար, ինչի մասին են վկայում կենդանիների արձանիկները և օջախների հենակները: Այն, որ բնակավայրում գտնվող ցանկացած օջախ ուներ նաև ծիսական գործառույթ, հաստատվում է դիցաբանական տվյալներով (Ռվ. I,15,2, 27,12, 66,4, 68,10, 149,1, III,5,4, 29,15, Ոդ. VII, 137, 154-155):

Միևնույն ժամանակ օջախների, զոհարան-հենակների կառուցվածքի և պատկերադրության օջախների անմիջական հարևանությամբ գտնվող իրերի, քանդակների, թաղումների քննությունը, այդ տվյալների համադրումը դիցաբանության և բանահյուսության տվյալների հետ, թույլ է տալիս որոշակի եզրակացությունների հանգել վաղ բրոնզեդարյան ծեսերի և հավատալիքների մասին:

Օջախների անմիջական հարևանությամբ կատարված թաղումներ: Օջախի վրա կատարված սպանությունը նկարագրվում է քրդական հեքիաթներից մեկում: Հատկանշական է, որ հեքիաթում նկարագրվում է, թե ինչպես էին պահպանվում զոհի ոսկորները[77]:

Նոր օջախի կառուցումը անմիջականորեն հնի վրա: Այս ավանդույթն ի հայտ է գալիս Գառնի, Բորիսպոլթեփե և այլ բնակավայրերում[78]: Ըստ Է. Խանզադյանի՝ նման ավանդույթը պետք է մարմնավորեր ընտանիքի և տոհմի հարատևությունը: Այս ավանդույթի հետ է փոխանցվում նոր բնակարանի կառուցման ժամանակ հին օջախից մոխիր տեղափոխելու ժողովրդական սովորությունը[79]:

Օջախի տեղափոխումը նոր կացարան: Խիզաննանթ-Գորայի B հորիզոնի թիվ 5 կացարանում հայտնաբերված է միայն օջախային հորը, քանի որ օջախը տեղափոխվել էր նոր կացարան: Նմանատիպ սովորություն դոյություն ուներ նաև հայոց մեջ[80]:

Սրբազան մոխրի պահպանումը: Պաշտամունքի առարկա էին ոչ միայն օջախը և կրակը, այլև մոխիրը: Հայոց մեջ օջախի մոխիրը թափվում էր գոմը: Այն պետք է ապահովեր անասունների դլխաքանակի պահպանությունը: Տաջիկական բանահյուսությունում օջախի մոխրի մեջ էր տաքանում տան ոգի Աջինան: Օջախի մոխիրների վրա էր կատարվում ծննդաբերությունը, մոխիրն օգտագործվում էր նաև թաղման արարողակարգի ժամանակ: Ըստ հնդկական դիցաբանության՝ մարմնին մոխիր քսելը նշանակում էր մեղքերից մաքրվել: Նույն նպատակով Արևմտյան Եվրոպայում

---

[77] Курдские народные сказки. М., 1989, с. 82-83.

[78] Է. Վ. Խ ա ն զ ա դ յ ա ն. Գառնի IV, էջ 15, Дж. А. Х а л и л о в. Раскопки поселения Бориспольтепе.– АО, 1985, с. 555-556.

[79] Է. Վ. Խ ա ն զ ա դ յ ա ն. Գառնի IV, էջ 10, Վ. Բ դ ո յ ա ն. Հայ ազգագրություն, Երևան, 1974, էջ 204:

[80] Н. Ш а н ш а ш в и л и. Նշվ. աշխ., էջ 60; Խ. Ս ա մ վ ե լ յ ա ն. Հին Հայաստանի կուլտուրան. Հ. I, Երևան, 1931, էջ 304:

Մեծ պասի առաջին չաբաթվա չորեքչաբթի օրը գյուղացիները երեսներին մոխիր էին քսում[81]: Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ մոխիրը կատարում էր երկու հիմնական գործառույթ. ա) պահպանիչ, բ) մաքրագործող:

Թռչունների պատկերներ: Թռչունների պատկերներ հաստատագրված են Գառնիի և Սև բլուրի շրջանաձև հենակների, ինչպես նաև օջախի պատկերով շենգավիթյան թասի վրա: Ռիգվեդայի հիմներից մեկում Ագնին համեմատվում է կարապի հետ (Ռվ. I,65,9): Հունական դիցաբանությունում կարապներ էին լծված Ապոլոնի կառքին[82]: Կարապի կերպար առավ նաև Զևսը՝ Լեդային առևանգելիս: Ըստ Ռ. Մենարի, այս առասպելում կարապ-Զևսը մարմնավորում էր լույսը[83]: Միաժամանակ կարապի պատկերը կարող է առնչվել հանդերձյալ աշխարհի և նախնիների պաշտամունքի հետ (Մահաբհարատա)[84]: Սկալդական պոեզիայում զինվորն անվանվում էր «արյան կարապի ընկեր», ընդ որում, «արյան կարապը» ագռավի անվանումն էր[85]: Վերլուծելով թռչունների պատկերները, Է. Խանզադյանը նշում է, որ թռչունների եռանկյունաձև մարմինը խորհրդանշել է մայրությունն ու պտղաբերությունը, և հետագա դարերի ընթացքում դարձել Անահիտ դիցուհու խորհրդանիշը[86]: Այսպիսով, թռչունի պատկերը դիտարկվող ենթատեքստում կարող էր խորհրդանշել՝ ա) լույսը, որը ստեղծվում է կրակով, բ) հրի և ջրի մաքրագործող ծիսական միասնությունը, դ) հանդերձյալ աշխարհը, դ) պտղաբերությունը:

Անտրոպոմորֆ պատկերներ: Վաղ բրոնզեդարյան օջախային համալիրներում հաճախ հանդիպող տղամարդու կերտվածքները կարող էին խորհրդանշել պտղաբերություն և սերնդի բարօրություն[87]: Մարդակերպ արձանիկները և օջախների մասերը կարող էին կապված լինել նաև նախնիների պաշտամունքի հետ[88]: Անտրոպոմորֆ կերտվածքները կարող էին նաև խորհրդանշել տան պահապան ոգին: Արևմտյան Եվրոպայում նորապսակները ուտելիքով սիրաշահում էին օջախում բնակվող տան ոգուն[89]: Հայոց մեջ միայն հայր-նահապետը կարող էր լինել օջախի սրբազանության պա-

---

[81] Վ. Բ դ ո յ ա ն. Նշվ. աշխ., էջ 90, 149-150 Ն. Տ ա ղ ա վ ա ր յ ա ն. Հայոց հին կրոնները. Կ. Պոլիս, 1909, էջ 14, Դ. Վ ա ր դ ու մ յ ա ն. Հայոց ժողովրդական բնակարանը (գլխատուն) սրբարան, Հայոց սրբերը և սրբավայրերը. Երևան, 2002, էջ 359, Ջ. Ֆ ր ե յ զ ե ր. Ոսկե ճյուղը. Երևան, 1989, էջ 716, 718, 721, 723, Э. Н. Т е м к и н, В. Г. Э р м а н. Мифы Древней Индии. М., 1985, с. 49-50; Сказки и легенды горных таджиков. М., 1990, с. 204.

[82] Гомеровские гимны. К Аполлону, 1-2 (լրիվ նշվում են հիմնի տողերը).– В кн.: "Эллинские поэты". М., 1955.

[83] Р. М е н а р. Мифология в древнем и современном искусстве. Минск, 2000, с. 290, 762.

[84] Махабхарата, кн. III Лесная, кн. Сказание о Раме. Махабхарата. вып. 3. Ашхабад, 1985.

[85] Сага о Греттире. Новосибирск, 1976, с. 71, 164.

[86] Է. Վ. Խ ա ն զ ա դ յ ա ն. Գառնի IV, էջ 156:

[87] С. А. Е с а я н. Скульптура..., с. 11.

[88] Е. В. А н т о н о в а. Первые святилища Армянского нагорья.– В кн.: "Междисциплинарные исследования культурогенеза и этногенеза Армянского нагорья и сопредельных областей". Ереван, 1990, с. 50.

[89] Календарные обычаи стран зарубежной Европы (весенние праздники). М., 1977, с. 216.

հապանը[90]: Միևնույն ժամանակ կին պատկերող կերտվածքները կարող էին խորհրդանշել պտղաբերության աստվածուհուն[91]: Ռիգվեդայում Ադ-նին ուներ նաև կնոջ մարմնավորում (Ռվ. I,66,5):

Ֆալիկ կուռքեր և կերտվածքներ: Ֆալիկ ելուստներ առկա են պայ-տաձև հենակներում[92]: Նման հենակները, Ս. Եսայանի և Տ. Չուբինիշվիլու կարծիքով, պատկերում են օջախը բեղմնավորող տղամարդուն[93]: Ֆալոսի կապը կրակի պաշտամունքի հետ երևում է Ռիգվեդայում (Ռվ. III,29,1): Հին Հնդկաստանում կրակի աստծո պաշտամունքի հետ էր կապվում ա-ռողջ սերնդի ծնունդը (Ռվ. I,66,8, 71,5, 97,4, II,9,5)[94]: Հայոց մեջ ընդուն-ված էր «օջախի պսակադրության» սովորությունը[95]: Այսպիսով, ֆալիկ կերտվածքները խորհրդանշում էին պտղաբերությունը և սերնդի հա-րատևությունը:

Խոյակերպ կուռքեր և կերտվածքներ: Հին աշխարհում լույսի և կրակի պաշտամունքը սերտորեն կապված էր խոյի պաշտամունքի հետ: Է. Խան-զադյանը՝ համադրելով այն փաստը, որ մ.թ.ա. III հազ. Արեգակը գտնվում էր Խոյի համաստեղությունում և խոյի բազմաթիվ կերտվածքնե-րը չենդավթյան մշակույթում, նշում են «խոյ-արև» կապը[96]: Խոյի հետ էր հաճախ պատկերվում Ապոլոնը[97]: Վասպուրականցիները նոր գնած ոչխա-րին մոտեցնում էին օջախին և ոտքերը լվանում ջրով[98]: Հայկական ժո-ղովրդական հավատալիքների համաձայն, ոչխարի մորթու մեջ փաթաթ-ված հիվանդը առողջանում էր[99]: Խոյի պահպանիչ դործառույթը արտա-ցոլվում է նաև երդմնազանցին անիծելու խեթական ծեսում, որտեղ օգտա-գործվում էր ոչխարի ճարպը[100]: Խոյը նաև պտղաբերության խորհրդանիշ էր: Ծաղկազարդի կիրակի կատարվող մոլդովական երգերից մեկում աս-վում է. «Պառավին խփում են վառարանին, պառավից դուրս է թռչում մի պատանի, իսկ պատանուց՝ խոյ ու ոչխար, իսկ այդ խոյից՝ կաթ ու թթվա-սեր»[101]: Օջախին զոհաբերություն կատարելու մասին խեթական տեքս-տում նշվում է, որ օջախին զոհաբերվում էր սպիտակ և սև բուրդ[102]: Հնդկական առասպելաբանության մեջ խոյի պաշտամունքը կապված էր

---

[90] З. В. Х а р а т я н. Культовые мотивы семейных обычаев и обрядов у армян.– "Армянская этнография и фольклор", т. 17, с. 42.

[91] Е. В. А н т о н о в а, С. А. Е с а я н. Նշվ. աշխ., էջ 233.

[92] Т. Н. Ч у б и н и ш в и л и. Նշվ. աշխ., էջ 68.

[93] Նույն տեղում, նշվ. աշխ., էջ 68, Ս. Ա. Ե ս ա յ ա ն. Հայաստանի հնագիտությունը. Երևան,1992, էջ 160:

[94] Атхарваведа. (XIV, 21). Избранные гимны. М., 1974. Այսուհետև հղումները Աթհարվավեդայի վրա՝ տեքստում:

[95] Դ. Վ ա ր դ ո ւ մ յ ա ն. Նշվ. աշխ., էջ 359, Ե. Լ ա լ ա յ ա ն. Վասպուրական, հավատք.– «Ազգագրական հանդես», գիրք XXV, 1913, №2, էջ 51:

[96] Է. Վ. Խ ա ն զ ա դ յ ա ն. Խոյի պաշտամունքը..., էջ 4:

[97] Р. М е н а р. Նշվ. աշխ., էջ 246.

[98] Խ. Ս ա մ վ ե լ յ ա ն. Նշվ. աշխ., էջ 304:

[99] Խալանտար (ժողովրդական վեպ).– Էմինյան ազգագրական ժողովածու. հ. Բ, Մոսկվա.–Վաղարշապատ, 1901, էջ 76:

[100] О. Р. Г е р н и. Хетты. М., 1984, с. 144-145.

[101] Календарные обычаи..., с. 208.

[102] Н. Ш а н ш а ш в и л и. Նշվ. աշխ., էջ 59.

նաև նախնիների պաշտամունքի հետ[103]: Այսպիսով, խոյը օջախային համալիրներում կարող էր կատարել պահպանիչ դեր, խորհրդանշել պտղաբերությունը, ինչպես նաև կապված լինել նախնիների պաշտամունքի հետ:

Ցլի քանդակները օջախային համալիրներում: Ցլագլուխ կերտվածքները կարևոր դեր են խաղում օջախային համալիրներում: Որպես Ագնի աստծո կենդանի, ցուլը հանդիսանում էր պտղաբերության և բեղմնավորման խորհրդանիշ (Ռվ. V, 23,1): Հին հնդկական ամուսնության ծեսում ցլի մորթին փռվում էր օջախի մոտ: Այն պետք է սպաներ չար ոգիներին (Ավ. XIV,2,24): Սակայն ցուլը նաև կապված էր հանդերձյալ աշխարհի պաշտամունքի հետ: Հին հույները Հադեսին ցլեր էին զոհաբերում, իսկ սկանդինավյան պոեզիայում կախաղանն անվանվում էր «ցլի օդ»[104]: Օջախին ցլի կաշի էին զոհաբերում խեթերը[105]: Այսպիսով, ցլի պատկերները օջախային համալիրներում կարող էին խորհրդանշել պտղաբերություն, առողջ սերունդ, սակայն բացառված չէ, որ կապված լինեին նաև նախնիների պաշտամունքի հետ: Հայկական ժողովրդական հանելուկներում օջախի կրակը համեմատվում է կարմիր կովի, իսկ ծուխը՝ սև հորթի հետ[106]:

Շան կերտվածքը: Շան պաշտամունքը հաճախ կապվում էր մահվան, հանդերձյալ աշխարհի հետ[107]: Սակայն շունն ուներ նաև պահպանիչ գործառույթ: Այսպես, թագավորական պալատից չար ոգիներին քշելու խեթական ծեսում պետք էր «ճարպից պատրաստել շնիկի արձանիկ և այն տեղադրել տան շեմին»[108]: Շան պահպանիչ դերն արձանագրվում է նաև հայ ժողովրդական հավատալիքներում[109]: Հերոդոտոսը հիշատակում է մի առասպել, ըստ որի Կյուրոսին դաստիարակել է հովվի կին, որի անունը թարգմանաբար նշանակում է «շուն»[110]: Այսպիսով, շան կերտվածքը օջախում կարող էր ունենալ պահպանիչ գործառույթ, ինչպես նաև կապված լիներ նախնիների պաշտամունքի հետ:

Եղջերու: Օջախային համալիրներում (Քոսի Ծոթեր, Կվացխելեբի) հայտնաբերված են եղջերվի ոսկորներ: Ըստ Յա. Կիկվիձեի, եղջերուն կապված էր պտղաբերության ծեսի հետ: Սարիսում և Կարախնում պաշտվում էր եղջերվի վրա կանգնած պատկերվող մի աստված, որի տիտղոսը թարգմանվում էր «հովանավորող ոգի» կամ «նախախնամություն»: Օ. Գերնին գտնում է, որ այս աստվածը կարող է հանդիսանալ նաև դյուղի աստված, քանի որ տեքստերից մեկում նրան անվանում են «արտերի որդի»[111]: Հատ-

---

103 Э. Н. Т е м к и н, В. Г. Э р м а н. Նշվ. աշխ., էջ 80.

104 Сага об Инглингах XXIV. Снорри Стурлусон Круг Земной. М., 1980, З. П. С о к о л о в а. Культ животных в религиях. М., 1972, с. 194.

105 Н. Ш а н ш а ш в и л и. Նշվ. աշխ., էջ 59.

106 Г. О. К а р а п е т я н. Армянский фольклор. М., 1979, с. 175.

107 З. П. С о к о л о в а. Նշվ. աշխ., էջ 146. З. В. Х а р а т я н. Նշվ. աշխ., էջ 33, Ե. Լ ա լ ա յ ա ն. Նշվ. աշխ., էջ 49: Курдские народные сказки, с. 120-121.

108 О. Р. Г е р н и. Նշվ. աշխ., էջ 145.

109 З. В. Х а р а т я н. Նշվ. աշխ., էջ 33, Ե. Լ ա լ ա յ ա ն. Նշվ. աշխ., էջ 49:

110 Հ ե ր ո դ ո տ ո ս. Պատմություն (I, 110), Երևան, 1985, Г. Е. А р е ш я н. Индоевропейский сюжет и мифология населения междуречья Куры и Аракса.– ВДИ, 1988, №4, с. 101.

111 О. Р. Г е р н и. Նշվ. աշխ., էջ 123–124, նկ. 2.

կանչական է, որ այս աստվածը կապ ուներ նաև թաղման ծեսի հետ, քանի որ մ.թ.ա. III հազ. խեթական դամբարաններում հաճախ հանդես են գալիս եղջերվի արձանիկներ: Վ. Արձինբան համարում է, որ եղջերվի վրա պատկերված աստվածը Արևի աստվածն էր[112]: Եղջերուն բազմիցս հիշատակվում է նաև գերմանական դիցաբանությունում: Ըստ Գ. Արեշյանի, եղջերուն կյանք-մահ-վերածնունդ եռամիասնությունում մարմնավորում է կյանքը և մարդկանց աշխարհը[113]: Անգլիական էպոս Բեովուլֆում դանների թագավորական պալատը կոչվում է եղջերվի պալատ և պսակված է եղջյուրներով[114]: Այսպիսով, եղջերուն կարող էր խաղալ պահպանիչ դեր, միաժամանակ խորհրդանշելով պտղաբերությունը: Սակայն բացառված չէ, որ այն կապ ունենար հանդերձյալ աշխարհի պաշտամունքի հետ:

Գյուղատնտեսական ծեսի մասին վկայող տվյալներ: Խիզաննանթ-Գորայի E հորիզոնում օջախի ծեփվածքում հայտնաբերված են ցորենի մնացորդներ: Ըստ Յա. Կիկվիձեի, դա վկայում է գյուղատնտեսական ծեսի մասին[115]: Խեթերը օջախին զոհարերում էին ընկույզ, չամիչ, կաթ, նուշ[116]: Կրակի և բույսերի պաշտամունքի միջև կապը երևում է Ռիգվեդայում (Ռվ. I,59,3, 68, 9-10, II,1,14-15): Հիմներից մեկում Ագնին ուղղակիորեն համեմատվում է հասած ցորենի հետ (Ռվ. I,66,3): Կրակի կապը հողագործական ծեսի հետ երևում է նաև ազգագրական նյութում: Ֆրանսիայում Բարիկենդանի խարույկից խնդրում էին տալ միրգ և ցորեն: Լեհաստանում Ա. Ագաթայի օրը օրհնվում էին հացն ու աղը, ինչի առնչությամբ կար ասացվածք, որ «ս. Ագաթայի աղն ու հացը կրակից են»: Այս ենթատեքստում կրակ-ցորեն կապը կարող էր ունենալ նաև պահպանիչ նշանակություն: Ցորեն-կրակ կապը կարող էր կապվել նաև սերնդի հարատևության հետ: Լեհաստանում դուշակության ժամանակ կաթսան դրվում էր կրակի վրա, ու եթե ցորենն էր բարձրանում, նշանակում էր առատ սերունդ[117]: Այսպիսով, ցորենի հատիկների ներդրումը օջախների ծեփվածքում, բուսական զարդանախշը օջախներում և օջախային համալիրներում խորհրդանշում էր պտղաբերություն, առատ սերունդ:

Տիեզերական մարմինների պաշտամունքը: Օջախներում և օջախային համալիրներում հաճախ հանդիպում են Արևի պաշտամունքի հետքեր: Հնդկական դիցաբանությունում Արեգակը համարվում էր Ագնիի երկնային դրսևորումներից մեկը, նրա բնակության վայրը (Ռվ. I,14,9, 66,1): Արևի խորհրդանիշ են համարում նաև թռչունը և սվաստիկան: Սվաստիկայի պատկեր կա օջախի և թռչունների պատկերով չենգավթյան թասի վրա[118]: Է. Խանզադյանը նշում է, որ օջախներում և օջախային համալիր-

---

[112] В. А. А р д з и н б а. Ритуалы и мифы Древней Анатолии. М., 1982, с. 24-25; Г. Е. А р е ш я н. Индоевропейский сюжет..., с. 99.

[113] Старшая Эдда. Речи Гриммира 34-35.– В кн.: "Старшая Эдда, Беовульф, Песнь о Нибелунгах". М., 1975; Г. Е. А р е ш я н. Индоевропейский сюжет..., с. 101.

[114] Беовульф 2, 79, 85.– В кн.: "Старшая Эдда, Беовульф..."

[115] Я. А. К и к в и д з е. Земледелие..., с. 50.

[116] Н. Ш а н ш а ш в и л и. *Նշվ. աշխ., էջ 59.*

[117] Календарные обычаи, с. *25, 37, 49, 205, 225.*

[118] *Է. Վ. Խ ա ն զ ա դ յ ա ն. Գառնի IV, էջ 153:*

ներում երևան է գալիս նաև Լուսնի պաշտամունքը: Լուսնի պաշտամունքի հետ է կապված օջախի պատկերով Շենգավթի թասը: Լուսնի հետ է նույնացվում նաև օձը[119]: Սակայն Արևի և Լուսնի խորհրդանիշների միաժամանակյա հանդես գալը կարող էր մատնանշել տիեզերքի միասնությունը: Ուշ խեթական տեքստերում հիշատակվում է Արևի աստված Էրեշկիգալի օջախը[120]:

Օջախների կոնստրուկտիվ առանձնահատկությունները: Շարժական օջախների և հենակների բազմաթիվ նմուշներում հաստատագրված են կիսագնդաձև բռնակներ: Գ. Իսմայիլովը ենթագրում է, որ բռնակները պահպանիչ դե՛ր ունեին: Ելնելով այն հանգամանքից, որ կիսագնդաձև բռնակներ հայտնաբերված են նաև ցլագլուխ հենակներում, Գ. Իսմայիլովը ենթադրում է, որ բռնակները խորհրդանշում էին հրաշունչ ցուլը[121]: Սիմվոլիկ նշանակություն ունեին նաև օջախների և հենակների վրա փորված փոսիկները: Ե. Բայբուրթյանը և Գ. Իսմայիլովը համադրում են այդ փոսիկները «բաժակատիպ» քարերի վրա փորված փոսիկների հետ: Գ. Իսմայիլովը դրանք համարում է աստրալ նշաններ[122]: Սակայն բացառված չէ, որ նշված փոսիկները կապված են կնոջ պաշտամունքի հետ: Ըստ Ե. Անտոնովայի, փոսիկները կարող էին նախատեսված լինել նախնիների ոգիներին ընծաներ թողնելու համար[123]: Բ. Կուֆտինի և Ն. Շանշաշվիլու ենթադրությամբ օջախների ու հենակների վրա անցքերը կարող էին ծառայել կենաց ծառի ամրացման համար: Ընդսմին, Ն. Շանշաշվիլին զուգադրում է այդ հիպոթեզը խեթական օջախի զոհաբերության ծեսի հետ[124]: Ռիգվեդայում Ագնին հաճախ բնորոշվում է որպես եռագլուխ (Ռվ. I,146,1): Այս բնորոշումը կարելի է նույնացնել երեք ելուստներով օջախների հետ: Եվս մեկ հիմնում նշվում է, որ Ագնին ունի երեք կացարան (Ռվ. III,21,5): Համադրելով այս տողը օջախների կառուցվածքի հետ, այդ «կացարանները» կարելի է համեմատել օջախների խորշերի հետ: Մեկնաբանելիս «երեք» թիվը, Ն. Շանշաշվիլին գտնում է, որ կրակը, օջախը և հենակը կազմում էին եռամիասնություն[125]:

Ընտանեկան օջախի ծիսական գործառույթների մասին վկայում են նաև դիցաբանական և ազգագրական մի շարք այլ տվյալներ: Այսպես, Բրետանում երեկոյան վառում էին օջախը և սեղանին ուտելիք էին թողնում նախնիների համար[126]: Հայ ազգագրության մեջ օջախը հանդիսանում է նախնիների պաշտամունքի օբյեկտ[127]: Ըստ Ատհարվավեդայի, կինը մտնե-

---

119 Նույն տեղում, էջ 152-154:

120 Н. Ш а н ш а ш в и л и. Նշվ. աշխ., էջ 59.

121 Е. Б а й б у р т я н. Последовательность..., с. 63; Г. С. И с м а и л о в. Раннебронзовая культура Азербайджана (Автореф. дис. докт. ист. наук). Тбилиси, 1983, с. 15-16.

122 Е. Б а й б у р т я н. Последовательность..., с. 63; Г. С. И с м а и л о в. Раннебронзовая культура..., с. 15.

123 Е. В. А н т о н о в а. Նշվ. աշխ., էջ 217.

124 Н. Ш а н ш а ш в и л и. Նշվ. աշխ., էջ 59–60.

125 Նույն տեղում, էջ 60:

126 Э. Т е й л о р. Антропология. СПб., 1908, с. 350.

127 З. В. Х а р а т я н. Նշվ. աշխ., էջ 39.

լով ամուսնու տուն, պետք է ընտանեկան օջախի մոտ երկրպագի նախնիների հոգիներին (Ավ. XIV,2,20): Օջախի կրակը որոշակի դեր էր խաղում նաև թաղման արարողության ժամանակ (Ավ.XVIII,4,9): Վասպուրականցիները հավատում էին, որ հաց թխելու ժամանակ թոնրի մեջ ընկած կուտը մահ է գուժում[128]: Դիցաբանական և ազգագրական տվյալները հիմնավորում են օջախների պահպանիչ դերը[129]: Հատկանշական է, որ ընտանեկան օջախի բոլոր նշված ծիսական գործառույթները համընկնում են Ագնիի գործառույթների հետ: Այսպես, Ագնի-Վայշվանարան զոհաբերության կրակն էր, իսկ Ագնի-Ջատավեդասը ապահովում էր տոհմի հարատևությունը[130]: Տարբեր մարմնավորումներում Ագնին նույնացվում էր Ինդրայի, Բրահմայի, Արյամանի (ամուսնության աստված), Տվաշտարի (որպես արու զավակներ պարգևող), Ռուդրայի (որպես ընտանեկան օջախը օրհնող), Սավիտարի (որպես հարստություն պարգևող), Բհագայի (որպես տան պահապան) և այլ աստվածների հետ (Ռվ. II,1): Օջախը կարող էր խորհրդանշել նաև բնության ուժերը[131]:

Այսպիսով, քննության առնելով չենգավիթյան մշակույթի օջախները, դրանց կառուցվածքը, օգտագործված շինանյութը, զոհարան հենակները, օջախային համալիրներում գտնված իրերը, դրանց տեղադրման վայրը և համադրելով ստացված փաստերը դիցաբանական և ազգագրական տվյալների հետ, կարելի է զատել օջախների և օջախային համալիրների երեք հիմնական գործառույթներ. ա) օջախները հանդիսանում էին նախնիների պաշտամունքի վայր, բ) ծառայում էին պահպանիչ ողջերի համար, գ) խորհրդանշում էին տոհմի հարատևությունը, բարգավաճումը և բարեկեցությունը, առողջ սերունդը, հողի պտղաբերությունը:

---

[128] Ե. Լ ա լ ա յ ա ն. Նշվ. աշխ., էջ 43-44:

[129] Палефат XL, Палефат. О невероятном – ВДИ, 1988, № 4; Брак у народов Западной Европы. М., 1989, с. 38, 202.

[130] Р и г в е д а. Նշվ. աշխ., էջ 759–760.

[131] T. T a k a o g l u. Նշվ. աշխ., էջ 14.

Աղ. 1



Աղ. 2



# ОЧАГИ И ОЧАЖНЫЕ КОМПЛЕКСЫ ШЕНГАВИТСКОЙ КУЛЬТУРЫ

*АРТАК ГНУНИ*

Резюме

Настоящая публикация посвящена очагам и очажным комплексам эпохи ранней бронзы. На основе анализа конструктивных особенностей очагов, их расположения в жилищах, а также предметов, непосредственно их окружающих, можно прийти к выводу, что: а) в периоде ранней бронзы существовали специализированные культовые очаги; б) культовые функции очага определяются всем комплексом признаков; в) культовые функции могли выполнять также хозяйственные очаги. Сопоставление этих данных с данными мифологии, фольклора и этнографии позволяет предположить, что очаги выполняли следующие культовые функции: а) были связаны с культом предков; б) служили оберегом живущим; в) были связаны с культом плодородия и символизировали благоденствие рода.

# THE HEARTHS AND HEARTH COMPLEXES OF THE SHENGAVIT CULTURE

*ARTAK GNUNI*

Summary

The author, basing on the facts of archaeology, mythology and folklore discusses some problems concerning the construction of hearths and their arrangement in the dwellings. In the Early Bronze Age some specialized cult hearths were fixed. The cult functions of hearths are formed by the whole complex of signs.The economic hearths could fulfill the sacral functions. The author supposes that the sacral functions of hearths were connected with a) the cult of ancestors, b) the cult of fertility. Besides, the magic force of the hearth protected the human beings.